

614.8

Հ-24 ՆՏԱՆԻ



ԿԱՐՄԻՐ ԽԱԶ

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ



№ 6 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ № 6

ՅԵՐԵՎԱՆ

1930

20 JUL 2010

03 .08. 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

614.8

Հ-ԶԿ

ur

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ՓՈԽԱԴՐԵՑ ԲԺ. Ա. Մ.

14341-57346



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ № 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

ՅԵՐԵՎԱՆ — 1980

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

Ամեն մարդ պետք է իմանա ինչպես գալ
ոգնության ուրիշին պատահարի ժամանակ:

Կյանքի մեջ մարդու հետ ամեն տեսակ
փորձանքներ են պատահում. և շատ անգամ
փորձանքը պատահում է մի այնպիսի տեղում,
վորտեղ վոչ բժիշկ կա, վոչ ել բուժակ:

Վոչ վոք չգիտե, թե ինչ է սպասում նրան
աշխատանքի միջոցին, զրոստիքի ժամանակ,
ճանապարհորդելիս կամ մինչև անգամ հենց
տանը նստած ժամանակ:

Ամեն տեսակ աշխատանք կապ ունի իրեն
հատուկ վտանգի հետ, վորը հասցնում է ոչ-
խառավորին այս կամ այն վնասվածքը:

Պատահարը կարող է լինել և վոչ աշխա-
տանքի ժամանակ, որինսկ ձիուց վայր բնկնե-
լը, փողոցում վայր ընկնելը, կառքի և ավտո-
մոբիլի տակ ընկնելը, հրադենի պայթյունից
վիրավորվելը, վոչ դիտավորյալ կերպով վի-
րավորելը մեկին սառը գենքով, կամ ձիու ա-
քացի տալը և այլն. . . այս բոլոր դեպքերում
անհրաժեշտ է ոգնության գալ տուժածին. իսկ

ոգնութիւնն հասցնելու համար պետք է գիտե-
նալ թե՛ ինչպէս կարելի յէ ոգնել, վորպեսզի
ոգնելու փոխարեն վնաս չհասցնել:


Յուրաքանչյուր գործ պահանջում է գի-
տութիւն, նույնպէս և առաջին ոգնութիւնը
պահանջում է գիտութիւն:

Չպետք է մոռանալ, վոր աննպատակա-
հարմար ոգնութիւնը կարող է վնաս հասց-
նել. որինակ շատ տեղերում վերքի վրա հող
են ցանում, բայց դա մի շատ վատ ու վնասա-
կար սովորութիւնն է. հողի մեջ կան ամեն տե-
սակ մանրեներ, վորոնք կարող են վարակել
վերքը և արյան վարակում առաջ բերել, իսկ
այս հիվանդութիւնը միշտ էլ մահով է վեր-
ջանում. ահա թե վորքան մեծ նշանակութիւն
ունի գիտենալ՝ ինչպէս ոգնութիւնն հասցնել
մեկին պատահարի ժամանակ:

Առաջին նկարը ցույց է տալիս ինչ ձև ունեն
մանրեները, վորոնք տարածված են ամենու-
րեք՝ ողի մեջ, փոշու մեջ, ջրի մեջ, հողի
մեջ, մեր հագուստի, մեր բերանի և քթի խո-
ռոչի մեջ, մեր մաշկի վրա:

Արանք շատ փոքրիկ արարածներ են, շատ
մօներ են, դրա համար էլ մանրէ յեն կոչվում.
Իբանք այնքան փոքր են, վոր հասարակ ուչ-

քով տեսնել նրանց չի կարելի, նրանց տեսնե-
լու համար բժիշկները գործ են ածում մի տե-
սակ գործիք, վորն ունի խոշորացնող ապակի-
ներ. այդ ապակիները մեծացնում են մանրե-



Նկար 1. Զանազան մանրեներ

ներին մի քանի հարյուր տնգամ, մինչև ան-
գամ 1000 և էլ ավելի անգամ և այն ժամանակ
միայն կարելի յէ տեսնել նրանց:

ԻՆՁՈՒ ՄԻՇՏ ԵՆ ՎՆԱՍ ԶԵՆ ՀԱՍՑՆՈՒՄ
ՄԱՆՐԵՆԵՐԸ

Նախ պետք է ասենք, վոր մանրեներ
մեջ կան վնասակարները և անվնասները,

նույնիսկ կան մարդու համար և ոգտակար-
ները:

Վնասակար մանրեներն ամեն անգամ և
ամենքն ել վնաս չեն տալիս. յերբ մարդու մաշ-
կը կամ գործարաններն առողջ են, պլովվածք
կամ քերծվածք չունեն, այդ մանրեները վնաս
տալ չեն կարող, իսկ յերբ մաշկը վիրավոր-
վում է, կամ գործարանների լորձնաթաղանթը
մի կերպ վնասվում է, այն ժամանակ ներկա
գտնվող մանրեները կիտվում են այդ
վնասված տեղում, բազմանում են ալգտեղ,
վարակում վերքը և, արտադրելով թույն, վա-
րակում, թունավորում են հիվանդի ամբողջ
կազմվածքը:

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ՆԻՎԱՆԴԻ ՅԵՎ ՎԻՐԱՎՈՐԻ ՆԵՏ

Դժբախտ դեպք պատահելիս շատ հաճախ
կարելի չէ ոգնել հիվանդին ու վիրավորին
մինչև բժշկի գալը, շատ հաճախ կարելի չէ
մահից փրկել նրան, կամ գոնե չվատացնել
նրա դրույթյունը:

Ոգնության ժամանակ նախ և առաջ պետք
է հոգ տանել, վոր տուժածն ավելորդ տան-
ջանքներ չունենա: Յեթե վիրավոր է, պետք է

շատ զգուշ կերպով պառկացնել նրան մի հան-
գիստ և հարմար տեղում: Պետք է աշխատել,
վոր ողբ լինի մաքուր և թարմ, հանել նրա
վրայից ճնշող հագուստը, արձակել ոձիքը և
գոտին: Յեթե վիրավորը արյուն չառ և կոր-
ցրել, պետք է տալ խմելու համար մաքուր և
սառ ջուր. վիրավորի հագուստի հետ պետք է
վարվել շատ զգուշաբար. կեղտոտ սպիտակե-
ղենը և հագուստը պետք է հանել այնպես, վոր
վերքին չկպչի, վոր այդպիսով վերքը չվա-
րակվի:

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ՎԵՐՔԻ ՆԵՏ

Յերբեք վերքին ձեռք չտալ, վոր չվարակել
նրան: Պետք է լվանալ ձեռքերը տաք ջրով և
ոսպոնով, բայց վորովհետև ձեռքերի վրա ելի
կարող են լինել մանրեներ, ուստի հարկավոր է
լվանալ ձեռքերը հականեխական ճարերի յու-
ծույթով, ինչպես որինակ՝ սուլեմայով կամ
կարբոլյան թթվուտով:

Չպետք է լվանալ վերքը սովորական ջրով,
լինի նա հորից կամ ջրմուղից վերցրած: Յեթե
վերքի յեղրերը շատ են կեղտոտ, ինչպես որի-
նակ հողային աշխատանքների ժամանակ, կա-
րելի չէ ծայրահեղ դեպքում լվանալ վերքի

յեզրերը յեռացրած սառ ջրով մաքուր ամանից
կամ աղբրի ջրով: Ամենից լավը վերքի յեզրե-
րին քսել յող:

Պետք է աշխատել, վորքան կարելի յե շուտ
ծածկել վերքը, վոր մանրեաներ չընկնեն նրա
մեջ: Վերքը ծածկելու համար պետք է դործա-
ծել մաքուր և սպիտակ շորի կտոր, լինի նա
սրբիչ, թաշկինակ, մաքուր սպիտակեղեն,
միայն նոր կտոր չլինի, այլ լվացած. ամենից
լավն է ծածկել վերքը հականեխական լու-
ծույթով պատրաստած մի կտոր թանգիլով,
վորը կարելի յե ստանալ դեղատնից պատրաս-
տի և վորը միշտ պետք է ունենալ համենայն
դեպս: Թանգիլի վրայից պետք է դնել խոնա-
վածուժ բամբակ, վորը նույնպես պետք է վերց-
նել դեղատնից և վորը ծծում է վերքի արտա-
թորությունը: Վերքի վրա բամբակ չի կարելի
դնել, վորովհետև նա խսկույն կպչում է վեր-
քին և հետո դժվար է պոկ դալիս:

ԻՆՉՊԵՍ ԿԱՊԵԼ ՎԵՐՔԸ

Վերքը թաշկինակով և բամբակով ծածկե-
լուց հետո պետք է կապել, վոր թաշկինակն ու
բամբակը վայր չընկնեն. կապելու համար
գործ են ածում փաթաթան թանգիլից, քաթա-
նից կամ ֆլանելից. կարելի յե և պատրաստել

փաթաթանը սպիտակեղենից, սավանից, բայց
վոչ նոր կտորից, այլ բանացրածից, միայն
մաքուր լվացածից. պետք է կտրել դանազան
յերկարության բայց միևնույն լայնության կը-
տորներ և ծայրերը կտրել միմյանց հետ և կը-
լորել և այդպես կլորած փաթաթանով կապել
վերքը: Ամեն մարդ վերքը կապել չի կարող,
ուստի դրա համար հարկավոր է փորձառու-
թյուն:

Վերքը կապելիս պետք է կատարել հե-
տևյալ կանոնները.

1. Կանգնել յերեսը դեպի հիվանդը,
2. Փաթաթանը պահել աջ ձեռքում,
3. Ձախ ձեռքով պահել մարմնի այն մասը,
վորն ուզում են կապել,
4. Բացել փաթաթանը ձախից դեպի աջ,
5. Վորը կամ ձեռքը կապելիս պետք է
սկսել փաթաթելը մատներից, ձեռքի ու վոտի
բարակ տեղից:

6. Փաթաթանի լավ մնալու համար յեր-
բեմն կնյար դնելիս հարկավոր է ծալել փաթա-
թանը,

7. Ամուր փաթաթել չի կարելի, պետք է
այնպես փաթաթել հեղին ու վոտը, վոր սր-
յունը կանգ չառնի, վոր ձեռքն ու վոտը
չմեռնեն.

Ծուռնին, ուսը, գլուխը փաթաթանով կապելն ավելի դժվար է, քան ձեռքն ու վոտը. կապելը կարդալով չեն սովորում, այլ աշխատելով. (տես նկար 2):



Նկար 2. Ուսի և ազդրի կապը

Յեթե ձեռքի տակ փաթաթան չկա, կարելի չէ շատ հասարակ և հարմար ձևով կապել յետանկյունի չորի կտորով, վորը կարելի չէ պատրաստել մաքուր լվացած սպիտակեղենից, ամրացնելով անգլիական քորոցով:

ԻՆՉ Ե ԱՆՀԱՏԱԿԱՆ (ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼ) ԿԱՊՈՑԸ

Պատերազմի ժամանակ յուրաքանչյուր կարմիր բանակային ստանում է առանձին կապոց, վորի մեջ կա թանգիվից և բամբակից պատրաստած բարձիկ վերքը ծածկելու համար և փաթաթան:

Այս բոլորը նախորոք թրջած են սուլեմայի լուծույթով և վորպեսզի չկեղտոտվեն և ուրի մանրեները չընկնեն նրանց վրա, ուտիլնի տոպրակի մեջ են դրված, իսկ վրայից ել կա բուրակ կտորից կարած մի տոպրակ:

Այս տեսակ կապոցը կոչվում է անհատական կապոց: Տոպրակի վրա դրսի կողմից գլորված է՝ ինչպես պետք է գործածել կապոցը վերքը կապելու միջոցին:

Նախ և առաջ պատուում են տոպրակները. վերքը կապելիս նանիտարը չպետք է ձեռք տա կապի այն մասին, վորը դնելու չէ վերքի վրա: Յերբեմն այս կապոցը գործ են ածում և խաղաղ ժամանակ:

Վորպեսզի կարողանալ պատերազմի ժամանակ առաջին ոգնությունն ցույց տալ իրեն կամ իր ընկերոջը, յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է խաղաղ ժամանակ սովորի

անհատական կապուցի գործածելը, իսկ պատե-
րազմի ժամանակ կապուցը ստանալուց հետո նա
պետք է լավ պահի և միշտ ել իրեն մոտ ունե-
նա:


Վիրավորին ոգնելու միջոցին միշտ պետք է
հիշել, վոր այն վերքը շուտ կլավանա, վորի ա-
ռաջին կապը յեղել է մաքուր և վորի մեջ ման-
րենքեր չեն ընկել, իսկ կեղտոտված վերքը յեր-
կար պետք է բուժել և նա կարող է մինչև ան-
գամ վտանգավոր դառնալ կյանքի համար:

ԻՆՉՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒ- ԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր վիրավորում սովորաբար
առաջացնում է արյունհոսություն վերքից:
Մեծ մասամբ այդ տեսակ արյունհոսությունը
չափ շուտ կանգ է առնում, յերբ վերքը կա-
պում են և վիրավորված տեղը սեղմում են
թանգիվով, բամբակով և փաթաթանով: Բայց
լինում են դեպքեր, յերբ վերքից շատ արյուն է
գնում և դա կարող է վիրավորի մահվան պատ-
ճառ դառնալ: Յեթե վիրավորը չի մեռնում ու-
ժեղ արյունհոսությունից, նա թուլանում է,
ուժասպառ լինում, իսկ ուժասպառ մարդու
վերքը վատ է ապաքինվում: Այդ պատճառով

չափ կարևոր է իմանալ ինչպես պետք է դադա-
րեցնել արյունհոսությունը:

Արյունը հոսում է սրտից մարմնի բոլոր
մասերը մի տեսակ խողովակներով, վորոնք
զարկերակ են կոչվում: Յեթե սեղմենք բութ
մատով մեկի ձեռքը հենց դաստակի մոտ, մենք
մատի տակ կզգանք արյան զարկը. այս դարկը
կոչվում է պուլս: Զարկերակների մեջ ար-
յունը բաց կարմիր գույնի յե:



Նկար 3. Թևի փոքրակապով դադարեցնում են ձեռքի արյուն-
հոսությունը

Գործը վերջացնելուց հետո, այսինքն՝
աննդարար նյութերը մարմնին տալուց հետո,
արյունը վերադառնում է դեպի սիրտն ուրիշ
խողովակներով, վորոնք կոչվում են յերակ, և

վորոնք մարմնի շատ տեղերում մաշկի տակից
յերևում են կապույտ լարերի պես: Սրանց մեջ
արյունը մութ գույնի յե և հոսում է դանդաղ:



Նկար 4.

Մարմնի այն տեղերը, վո-
րոնց սեղմելով կարելի յե
դադարեցնել արյունհոսու-
թյունը

Առանձնապես վտանգավոր է արյունհո-
սությունը վիրավորված զարկերակից: Այդ կա-
րելի յե իմանալ նրանից, վոր արյունն ալ, բաց
կարմիր գույնի յե, հոսում է հորդառատ և
կարծես զարկերով է դուրս թափվում: Վոր-
պեսզի դադարեցնել այդ տեսակ արյունհոսու-

թյունը, պետք է ամուր սղմել զարկերակը
վերջից մի փոքր վերև (այսինքն՝ սրտին ավելի
մոտ), և վոսկրի վրա:

Յ և 4 նկարի վրա ցույց են տված այն տե-
ղերը, վորտեղ կարելի յե սղմել զարկերակի
վիրավորման դեպքում: Միևնույն ժամանակ
պետք է բարձր պահել մարմնի այն մասը, վոր-
տեղ գտնվում է վիրավորված տեղը:

Վոր սղմելը դադարեցնում է արյան հո-
սանքը, դրանում կարելի յե համոզվել առողջ
մարդու վրա. յեթե սղմենք զարկերակն ար-
մունկից վերև, պուլսի զարկը դաստակի մոտ
կկանգնի:

Փոխանակ մատով սղմելու կարելի յե ամ-
ուր կապել վիրավորի ձեռքը կամ վոտը թաշ-
կինակով, կլորած սրբիչով, փոկով, նախորդ
դնելով զարկերակի վրա մաքուր լաթից պատ-
րաստած գունդ կամ կլորած փաթաթան: Բայց
պետք է մի բան չմոռանալ, վոր այդպես ամուր
կապած կարելի յե պահել վոտը կամ ձեռքը վոչ
ավելի քան 2-3 ժամ, հակառակ դեպքում կա-
րող է մեռնել մարմնի այդ մասը արյան հոսան-
քի բոլորովին դադարելուց և ստիպված պետք
է կտրել այդ մասը:

Այս պատճառով ամուր կապ դնելուց հետո

պետք է անմիջապես տեղափոխել վերափորին բժշկի մոտ, վորը կդադարեցնի արյունն ուրիշ ձևով: Յեթե 2-3 ժամ անցել է և բժիշկը դեռ չկա, պետք է թուլացնել կապը, դարկերակը սեղմել մատով ու հետո նորից կապ դնել: Պատերազմի ժամանակ սանիտարներին տալիս են ուետինն յերկար խողովակներ վիրավոր մասի վրա կապ դնելու համար արյունհոսությունը դադարեցնելու նպատակով (տես նկար 5):




Նկար 5.
Թևի վրա դրված վուր

Յերբ արյունը հոսում է յերակից, պետք է բարձր պահել վուրը կամ ձեռքը և սղմել կամ կապ դնել վերքից ցածր (սրտից հեռու), վորովհետև այստեղ արյունը հոսում է վոչ թե սրտից, ինչպես դա դարկերակների մեջ է, այլ հակառակ ուղղությամբ դեպի սիրտը:

Յերակի արյունհոսությունը դադարեցնելն ավելի հեշտ է քան դարկերակի, վորովհետև յերակի պատերն ավելի փափուկ են, դյուրին իջնում են և շուտ կպչում միմիանց:

Շատ հաճախ, կարծես և առանց պատճառի, լինում է արյունհոսություն քթից: Այդ արյունհոսությունը դադարեցնելու համար պետք է նստեցնել հիվանդին հանգիստ դրության մեջ. հիվանդի պառկած դրության մեջ արյունն ուժեղ է հոսում դեպի գլուխը, ուստի դժվար կլինի դադարեցնել արյունը, յեթե հիվանդը պառկի, այդ դեպքում պետք է բաց տնել ոճիքը, վոր չարգելի գլխից արյան հեռ դրնալը յերակներով. ճակատի վրա, քթի հիմքի վրա, յերկու աչքի մեջտեղը պետք է դնել սառուց կամ սառը ջրով թրջած լաթ, վորովհետև սառնությունից արյան անոթները սղմվում են. քթի մեջ պետք է ճխտել խոնավածուծ բամբակ, վորքան կարելի յե ամուր, բայց աշնպես, վոր բամբակի մի ծայրը դրսից յերես և վոր հեշտ լինի հանելը: Յեթե արյունը չի դադարում, պետք է սղմել պարանոցի վրա այն դարկերակը, վորն արյուն է տանում դեպի գլուխը և հիվանդին անհապաղ տանել բժշկի մոտ:



Պարանոցի զարկերակը սղմելիս պետք է
զգուշանալ, վոր չսղմել և չնշափողը և այդպի-
սով չգժվարացնել շնչառությունը:

ԻՆՉՊԵՍ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼ ՎՈՍԿՐՆԵՐԻ ԲԵԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Շատ մեծ նշանակություն ունի իմանալ
թե ինչպես պետք է ոգնություն ցույց տալ,
յերբ մարդու մարմնի վոսկրներից մեկն ու մե-
կը կտարվել է:

Վոսկրի բեկումը կարող է առաջ գալ ու-
ժեղ հարվածից, որինակ ձիու սմբակի հար-
վածից, կամ մարդու վայր ընկնելուց, կամ յերբ
գնդակն է վիրավորում վոսկրը: Մեծ մասամբ
կտարվում է ձեռք ու վոտի յերկար վոսկրները:
Կտարված ձեռքը կամ վոտն ունի անկանոն ձև
և մարդ նրանով աշխատել չի կարող. յեթե
փորձ անի շարժելու, կլսենք կտարված վոսկրը-
ների ճթճթոցը, իսկ հիվանդը կզգա ուժեղ ցա-
վեր:

Կան փակ բեկումներ, կտարվածքներ (տ.
նկար 6), յերբ մաշկի վրա վոչ մի վնասվածք
չկա. յերբ վոտն ու ձեռքը վիրավորված են ար-
տաքուստ ևս ու վոսկրի կտարված ծայ-

րերը դուրս են ցցվում վերքից, այն ժամանակ
բեկումը կոչվում է բաց:



Նկար 6. Սրունքի փակ բեկում

Մենք արդեն գիտենք, վոր բաց վերքի մեջ
կարող են ընկնել մանրէներ և կարող են վարա-
կել նրան, ուստի բաց բեկումն ավելի վտան-
գավոր է, քան փակը:

Վոսկրի բեկման դեպքում պետք է մի ա-
ռանձին խնամքով փոխադրել վիրավորին, վո-
րովհետեւ սառսրիկ ցավ է զգում նա. բացի դրա-
նից, վոսկրների ծայրերը կարող են վնասել
վերքը շրջապատող փափուկ մասերը, նույնպես
և մաշկը, կարող են վիրավորել մոտից անցնող
դարկերակը և առաջացնել ուժեղ արյունհոսու-
թյուն: Փակ բեկման դեպքում դրսից չի յերեա-
հոսում արյունը, և արյունհոսության մասին
հայտնի չի դառնում այն ժամանակ, յերբ վե-
րավորի դրությունը դառնում է ծանր:

Յուրաքանչյուր կարմիր բանակային դի-
ուե, վոր, յերբ ուղղակի արշավանքի ժամա-
նակ կտարվում է գումակի սայլակի առեղը և

հնար չկա տեղն ու տեղում իսկույն և յեթ փոխարինել նորով, պետք է կապել առեղի կտորոված ծայրերին փայտի կտոր կամ ցանկապատից վերցրած ձաղ:

Նույնպես են վարվում և ձեռք ու փոտի կտորվելու դեպքում:

Նախ և առաջ պետք է այնպես անել, վոր ձեռքը կամ փոտը մնա հանգիստ պոռկած, չըշարժվի և չճոճվի:

Դրա համար կոտրված ձեռքին ու փոտին կապում են մի տեսակ տախտակ կամ փորակ, վորոնք կոչվում են բեկակալ: Այդ տեսակ կապը կոչվում է անշարժ:

Բայց հիվանդին բժշկի մոտ տանելու համար անհրաժեշտ չեն այդպիսի բեկակալները: Դրանց փոխարեն կարելի չե վերցնել մի համապատասխան տախտակ, կրակքաշիկ, թրե բուն, հրացան, մի պայմանով միայն, վոր վերցրած տախտակը կամ այլ իրը լինի բավականին յերկար, վոր բռնի կոտրված տեղի մոտակա յերկու հոգը՝ որինակի համար, յերբ ազդուսկրն է կոտրված, տախտակը վարից պետք է հասնի կրնկին, իսկ վերից-պետք է լինի գոտից վերև: Այս դեպքում ոգնության համար պետք է վարվել այսպես. վերքի շուրջը

քսել յող, դադարեցնել արյունհոսությունը, կապ դնել վերքի վրա, ինչպես նկարագրված է վերևում, հետո վոտի արտաքին կողմից կապել յերկար տախտակ, ինչպես ասացինք, իսկ ներքին կողմից կապել ուրիշ տախտակ, մի փոքր կարճը, դրանց տակ, վոտի վրա վոսկրների գուրս ցցված տեղում դնել բամբակ կամ մի ուրիշ փափուկ բան:

Յեթե կոտրված է ձեռքը, պետք է դնել բեկակալն այնպես, վոր ձեռքն արմուկում մնա ծարված: Բեկակալը դնելիս կոտրված մասը պետք է ձգել, այնպես, վոր վոսկրի կտորոված ծայրերը մոտենան միմիանց. ամելի լավ է, վոր յերկու մարդ ձգի. մեկը կոտրված տեղի վերևից, իսկ մյուսը ստորևից:

Յեթե բեկումը պատահել է անապատում, վորտեղ վոչ մի տեսակ նյութ չկա բեկակալի համար, կարելի չե կապել կոտրված վոտն ուղղվ փոտին, իսկ ձեռքը մարմնին և սոյդ՝ դրությամբ հասցնել հիվանդին բժշկի մոտ:

Այսպիսի ժամանակավոր կապ դնելուց հետո անհրաժեշտ է, վոր հիվանդին խուտ նայի բժիշկը. նա ամելի ամուր կապ կդնի կոտրվածքի վրա և կուղարկի հիվանդանոց կամ կոտոր

բեցնի թե՛ ինչպես վարվել մինչև վոսկրի կրպ-
չելը:



Նկար 7. Բեկակալի փոխարեն ճիպոտներ

Սովորաբար կոտրված վոսկրը կպչում է
մի քանի՝ չարաթվա ընթացքում. բարակ վոս-
կրները կպչում են 3—4 չարաթվա ընթացքում,
իսկ ազդրի վոսկրը կարող է 6 չարաթվա ըն-
թացքում անգամ չկպչել: Յերիտասարդ ան-
ձանց կոտրված վոսկրները, մանավանդ յերե-
խոտների ամբի չուտ են կպչում, քան ծերերի:

Յեթե բեկումը բաց է և վերքի մեջ ընկնում են
մանրեներ, այն ժամանակ կպչելը կարող է ու-
շանալ:

7 նկարը ցույց է տալիս, վոր բեկակալի
փոխարեն գործադրված են ճիպոտներ:

ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ՅԵՐԲ ՎՆԱՍՎԱԾ ԵՆ ՀՈԴԵՐԸ

Յերբեմն հոդերը վնասվում են անհարմար
չարժում գործելիս կամ վայր ընկնելիս:
Վոսկրերի միացման տեղը կոչվո. Ժ է հոդ, կամ
ինչպես ժողովուրդն է ասում՝ «խալ» (ար-
մունկ, ծունկ, ուսույլուխ և այլն): Վոսկ-
րերը միանում են միմիանց հետ կապերով:
Յեթե կապը միայն վնասված է, բաց չի պո-
տված, այն ժամանակ այդ տեսակ վնասված-
քը կոչվում է ձգվածք, իսկ յեթե վոսկրի դր-
լուխը դուրս է ընկել տեղից, խախտվել է հո-
դը, այն ժամանակ այդպիսի վնասվածքը կոչ-
վում է հոդախախտ: Հոդախախտից հետո յե-
րբում է, վոր մարմնի այդ մասի ձևը փոխվել
է վնասվածքի տեղում: Թե ձգվածքի և թե
հոդախախտի դեպքում հոդը շատ շուտ ուռ-
չում է և վնասված տեղի շարժումները սոս-
տիկ ցավ են առաջ բերում:

Զգւածքի և հողախախտի դեպքում ամենախեղացի ոգնությունը սա յե՝ վնասւած ձեռքը կամ վնասուած պահել քիչ բարձր և հանգիստ դրութեան մեջ: Յերբեմն դժուար է վորոշել՝ արդյո՞ք ձգւածք է, թե հողախախտ. սակայն չեն և այն դեպքերը, յերբ դժուար է վորոշելը՝ հողախախտ է թե բեկում: Այս տեսակի դեպքերում պետք է նախ և առաջ հիմնադրին այնպիսի դիրք տալ, վոր վնասված հողը հանգիստ մնա, լինի անշարժ և վորքան հնարավոր է քիչ ցավի: Հողախախտի ուղղելը պետք է կատարել բժշկի, կամ նրա ունականը, կամ այնպիսի անձնավորութեան, վորը գիտէ խախտված հողի ուղղելը:

ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ԶԱՐԴՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Վայր ընկնելիս, հարվածի կամ բռնի դեպքում մարդ կարող է ջարդվածներ ստանալ: Յերբեմն ջարդվածքը վնաս չի տալիս, փոքր յերակներն են մի փոքր վնասվում, ջարդված տեղը կապտում է, ուռչում, բայց այդ բոլորը շատ շուտ անցնում են: Բայց կան դեպքեր, յերբ արտաքուստ վրէժն չի յերեւում, իսկ ներքուստ կարող է վնասված լինի

մի վորեւէ կարեւոր դործարան՝ լյարդը, թոքերը. հիվանդն ուշագնաց է լինում և նրա կյանքը վտանգի տակ է: Պատերազմի ժամանակ թնդանութի արկի պայթյունի ուժեղ ցրնցումից առաջացած ջարդվածքներն են կարող են վնասվածքներ լինել. ուստի բժշկի պետք է շատ շուտ քննի այդպիսի հիվանդին, իսկ մինչև բժշկի նայելը պետք է պահել հիվանդին հանգիստ դրութեան մեջ, ինքն օդում, պետք է արձակել նրա ուժիքը և հանել ավելորդ հագուստը: Յեթե հիվանդի դեմքը ստատիկ գունատ է, հարկավոր է սառ ջուր ցանել դեմքին, պատկեցնել հիվանդին այնպես, վոր վրաններն ու մարմնի ստորին մասը լինի գլխից բարձր, դրա համար կարելի չէ բան գնել մահճակալի կամ թախտի վրանների տակ:

ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ԱՅՐՎԱԾԻՆ

Բարձր տաքութեան ազդեցութեանից մարդու մարմնի վրա այրվածքներ են առաջ գալիս: Այս վնասվածքները կարող են առաջ գալ յեռացրած ջրից կամ այրող հեղուկներից, կամ հենց կրակից. պատերազմի ժամանակ դործ են ածում մի տեսակի գործիք, վորը հրձիգ է կոչվում և վորը թշնամու վրա ձգում

Հին գնալիս պետք է աշխատել հետ չընկնել ընկերներեից: Հոգնածության դեպքում չպետք է պառկել դեռնին, վորովհետև սառչելու սկզբում մարդու քունը տանում է և յեթե սառնումանիքին հոգնած մարդը պառկի, իսկույն կքնի և քնած ել հենց կմնա, ուստի ևս առավել վտանգավոր է դինի կամ ողի դործածելը. հարբածները ցրտին քնում են և սառչում:

Յրտահարությանը և սառչելը կարող են պատահել վոչ միայն ուժեղ սառնամանիքին, այլև աշնան ցուրտ, խոնավ և հոգմ յեղանակին:

Սառչելիս քիթն, ականջները կամ թուշը սկզբում սաստիկ գունատվում են. դա արյան կանգ առումից է: Այս դեպքում պետք է ուժեղ կերպով արորել գունատ տեղը ձնով, և արյունը նորից կլցվի սառած տեղը: Յեթե չնայած դրան ելի սառչեն այդ տեղերը, այն ժամանակ մաշկը կարմրում է և ուռչում, ինչպես թեթև ալրված քի դեպքում: Յեթե սառչումը շատ է ուժեղ, այն ժամանակ մաշկը կամ կարմնի սառած ամլողջ մասը մեռնում է: Սառած տեղերին պետք է քսել վազելին, կապել ինչպես վերքերի դեպքում, իսկ բժշկելու համար անպատճառ դիմել բժշկին:

Յեթե մարդ մրսում է, պետք է տաքանա խարույկի մոտ կամ տուն դնա: Իսկ յերբ հոգնած և սառնամանիքին քնած մարդն սկսել է փայտանալը, չի կարելի մեկեն տաֆացնել նրան սենյակում կամ խարույկի մոտ:

Այս կարող է շատ վատ ազդեցություն ունենալ արյան շրջանառության վրա և կարող է մահ առաջացնել: Խարույկի մոտ տաքացող սառած մարդը շատ շուտ մեռնում է:

Սառածի մարմինը պետք է ուժեղ կերպով չփել ձնով կամ սառ ջրով, վոչ սենյակում, այլ դրսում կամ սարայում: Կարելի է տալ նրան զգալ զգալ ամուր թեյ կամ սուրճ, յեթե իհարկե նա կարող է կուլ տալ:

Սառած մարդուն տեղափոխել պետք է շատ մեծ զգուշությամբ, վորովհետև շատ հեշտ է կոտրել նրա ձեռքն ու վոտը: Միայն այն ժամանակ կարելի է տանել սառածին սենյակ, և այն ել վոչ շատ տաք սենյակ, յերբ հիվանդն ուշքի է յեկել և յերբ փայտացած տեղամիները զառել են փափուկ և ցուցահանում են կենդանության նշաններ:

ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ԱՐԵՎԱՀԱՐԻՆ ՅԵՎ
ԶԵՐՄԱՀԱՐԻՆ

Մարդ կարող հանկարծ հիվանդանալ

վոչ միայն ցրտից, այլ և ուժեղ տաքությունից: Արեգակի ճառագայթներն ազդում են գլխի վրա և արյունն առատ կերպով և հոսում դեպի գլուխը. դրանից առաջ և գալիս գլխացավ, սրտախառնում, իսկ հետո և ուշագնացություն:

Այս կոչվում է արեւահարություն:

Պատահում է և այլ կերպ. արեգակը չի յերևում, յեղանակը չոգ է, խաղաղ է, քամի չկա, տոթ է և ոգը խեղդոգ: Այս յեղանակին կարող է ջերմահարություն լինել: Աշխատելիս մարդ միշտ արտադրում է տաքություն: Տոթ յեղանակին տաքության արտադրումը կարող է կանգ առնել, մարդու մարմինը տաքանում է և չափից դուրս, շունչը կտրվում է, սրտի դործունեյությունը խանգարվում, մարդ կորցնում է գիտակցությունը և վայր ընկնում անզգա:

Արեւահարության կամ ջերմահարության դեպքում պետք է շուտ տեղափոխել հիվանդին լավ տեղ, հանել վրայից բեռը, հազուստը, սառ ջուր լցնել գլխին և կրծքին. խմելու համար շատ ջուր տալ: Յեթե հիվանդը չի շնչում, պետք է կատարել արհեստական շնչոգություն, վորի մասին կպատմենք ներքևում:

Արեւահարությունից կամ ջերմահարությունից կարող է մարդ և հանկարծամահ լինել. ուստի պետք է վաղորոք միջոցներ ձեռք առնել, վոր պաշտպանվել այդ տեսակ պատահարներից:

Այդ նպատակով պետք է ըստ կարելույն ծանր աշխատանք չկատարել ամառվա տաք օրերին գլուխը բաց, հաճախ հանգստանալ և շատ ջուր խմել: Յեթե մի վորեւէ կարմիր բանակային մաս ամառը տեղափոխվում է մի տեղից մյուսը, այդ մասի հրամանատարը պետք է դուրս բերի նրանց վաղ առավոտյան, իսկ ամենաչոգ ժամանակ նշանակի դադարք մի վորեւէ զով տեղում: Գնալիս պետք է բեռ քիչ ունենալ, հազուստը պետք է թեթեւ լինի և ուժիքն ել բաց. խիտ սյունով և սեղմ շարքերով չպետք է ընթանալ, այլ պետք է ազատ մնալ և միմիանցից հեռու, վոր քամին խիտ յուրաքանչյուրին: Յերբ մեկն ու մեկի գլուխը ցավի, յերեսը կարմրի, թոշնի, պետք է իսկույն նրա տեղնել նրան սալյակի վրա, ջուր տալ խմելու և յեթե հնարավոր է ստիկրում հանգիստ տալ նրան:

ԻՆՁՊԵՍ ՈԳՆԵԼ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՎՆԱՍՎԱԾԻՆ

Ելեկտրական հոսից ևս կարող են առաջ
գալ ալրված քներ:

Բայց ելեկտրական հոսից վնասվելու դեպ-
քում կարևորը վոչ թե ալրված քներն են, այլ
ելեկտրականության ներդրածությունն ամբողջ
կազմված քի վրա:

Այս փորձանքներն ավելի հաճախ պատա-
հում են ֆարրիկներում, դործարաններում,
հոնքերում, յերբ բանվորները ձեռք են տալիս
ելեկտրականության վոչ մեկուսացած լարին:

Այս դեպքում մարդ անշուշտ վայր է ընկե-
նում գետին, սկսվում են սանդանքներ, շրն-
չառությունը կտրվում է, սիրտը հազիվ հազ է
դործում: Յերբեմն մարդ կալած է մնում լա-
րին և վոչ մի կերպ չի կարողանում պոկ գալ
նրանից:

Ոգնություն ցույց տալիս նախ և առաջ
պետք է վազել վոչ քե տուժածի մոտ, այլ ան-
ջատիչի մոտ և անջատել հոսը: Յեթե մի փոր-
եկ պատճառով **անհնար է անջատել** հոսը
որինակ չգլտես անջատիչի սեղը, այն ժամա-
նակ յերբեք չի կարելի դիպչել տուժածին մերկ
ձեռքերով չորից հեռացնելու համար. այն

ժամանակ ոգնության հասնող անձինք իրենք
ևս գոհ կգնան ելեկտրական հոսին: Պետք է
փորձել հեռացնել լարը տուժածից չոր փայ-
տով: Տուժածին կարելի չէ մոտենալ միայն
ռետինե ձեռնոցներով և կրկնակոշիկներով կամ
ձեռքերին փաթաթած մահուդի կամ բրդի
թաշկինակներով:

Ելեկտրական հոսից վնասվածին առաջին
ոգնություն ցույց տալիս պետք է կատարել
արհեստական շնչողություն: Պետք է չիչել,
փոր հենց ելեկտրական հոսով վնասված քի դեպ-
քում յերբեմն սեղի յե ունենում այսպես ա-
սած «կեղծ մահ», այսինքն վնասվածին մե-
ռած են համարում: Մինչդեռ այդ տեսակ հի-
վանդներին կարելի չէ փրկել, և դրա համար
հարկավոր է լինում կատարել արհեստական
շնչողություն մի քանի ժամ:

Ծանր դեպքերում առաջին ոգնությունը
ցույց տալուց հետո պետք է անհապաղ հասց-
նել տուժածին հիվանդանոց:

ԻՆՁՊԵՍ ՈԳՆԵԼ ԿԱՅԾԱԿԱՆՈՒՆ

Կայծակից վնասվածքը նման է ելեկտրա-
կանությունից վնասվածքին, միայն վոչ այն
ելեկտրականության հոսից, փոքր գալիս է կա-

յանից լարերով, ալլ ոգի մեջ գանձող ելեկ-
տրականությունից: Ելեկտրականություն պար-
պումից առաջ է գալիս կայծակ: Սովորական
կայծակնահար մարդն անմիջապես վաղը և
լնկնում գետին մեռած: Յեթե կայծակը
խփել է մարդու մոտ մի տեղի, աչն ժամանակ
հնցումը կարող է ուժեղ կերպով չպոտել մար-
դուն, վորը դրանից կարող է ստանալ ջարդ-
վածքներ, վոսկրի բեկում, կամ ուղեղի ցրն-
յում:

Առաջին ոգնությունը կախում ունի վնաս-
վածքից, աչսինքն նայած՝ թե ինչն է վնաս-
ված և ինչպես է վնասված:

Կայծակից խուսափելու համար պետք է
ամպրոպի ժամանակ հեռու մնալ գանադան շեն-
քերից և մանավանդ ծառից. կայծակը հաճախ
է խփում այդ առարկաներին: Սենյակում յե-
ղած դեպքում չպիտք և կանգնել բաց պատու-
հանի առաջ, կամ գաղի խողովակների մոտ,
Ելեկտրական յարերի մոտ. ամպրոպի ժամա-
նակ չի կարելի նստիկս խոսել հեռաձայնով
(տելեֆոնով) և աչն... Կայծակից պաշտ-
պանվելու ամենալավ միջոցը—չանթարդելն է:

ԱՐՆԵՍՏԱԿԱՆ ՇՆՉՈՂՈՒԹՅՈՒՆ


Ֆերրեմն շատ արյուն գնալուց, արևահա-
րությունից կամ ջերմահարությունից մարդ
կորչնում և գլխակցությունը, դառնում է ան-
շղատ և դադարում է շնչել: Շնչառությունը
վերսկսելու համար բախտան և քիթը խո-
տուտ ածել փետուրով կամ տալ շնչելու հա-
մար սուր հոտ ունեցող մի գորեկ նյութ, որի-
նակ՝ անուշադրի սպիրտ. բայց դա միշտ ել
չի ոգնում. յեթե աչք տեսակ հասարակ մի-
ջոցները շնն ոգնում տուժածին, արհեստական
շնչողություն պետք է կառարել:

Մարդ շնչելիս, ող և հավաքում թոքերի
մեջ, վորոնք գանձում են կրծքի վանդակում
կողերի տակ: Կրծքի վանդակը լայնանալիս,
լայնանում են և թոքերը, լցվելով ոգով—շնչա-
ղություն է դա. յերբ սղմում ենք կրծքի վան-
դակը, սղը թոքերից դուրս և մղվում—դա
արտաշնչում է:

Կատարելով արհեստական շնչողություն,
աչխատում են առաջ բերել շնչողություն և ար-
տաշնչում փոխեփոխ լայնացնելով և սեղմելով
կրծքի վանդակը: Արհեստական շնչողության
ամենահասարակ ձևերից մեկը սա յե:

Փսել գետնին մի վերմակ կամ գրաս (չի-

ներ), պառկեցնել հիվանդին յերեսնի վար, ձեռքերը դեպի առաջ (տես նկար 8), խոշ գլուխը թեքել դեպի մի կողմ: Ուղնություն հասցնողը չոքում է աջնակա, վոր հիվանդի



Նկար 8. Առաջին դրուժյուն

հետույքը մնում է ուղնուղի ազդերի մեջ տեղը. հետո ուղնուղը գնում է իր ձեռքը հիվանդի մեջքի վրա աջնակա, վոր յերկու ամբողջ



Նկար 9. Յերկրորդ դրուժյուն

յինեն հիվանդի վոդնաչարի յերկու կողմին, ստորին կողերի վրա. կռանալով քիչ


առաջ, առանց ծալելու արմունկները, ուղնուղն իր ամբողջ ծանրությամբ ընկնում է իր ամբողջ վրա և հետևապես հիվանդի մեջքի (տ. նկ. 9). այս ձևով հիվանդի կրծքի վանդակը սղմվում է և թոքերի միջին դուրս է դալիս ողը: Դրանից հետո հարկավոր է դադարեցնել սղմելը և հետ քաշել մի փոքր, առանց վերցնելու ձեռքերը հիվանդի մեջքից: Հիվանդի կողերը և կրծքի վանդակը իրեն իրեն կուղղվեն, կբացվեն և կլայնանան. նրանց հետ միասին կը լայնանան թոքերը և ողը կմտնի ներս: Այնուհետև նորից են սղմում ու կրկին դադարեցնում, և կատարում են այդ շարժումները յուրաքանչյուր բույսի մեջ 15—20 անգամ: Ավելի լավ է այսպես անել: Ուղնուղը շունչ քաշելիս սղմում է պառկածի կրծքի վանդակը, իսկ արտաշնչելիս դադարեցնում է սղմելը:

Յերրեմն հիվանդը սկսում է շնչել, յերբ յերկար ժամանակ են կատարում արհեստական շնչուղուքյունը, որիմակ 1 ժամ և ել ավելի: Ապա ուրեմն չափաք է հուսահատվել և հիվանդին առանց ուղնության թողել, յերբ նա չուա չի դալիս ուշքի: Իսկ մինչև այդ պետք է հրավիրել բժշկին, վորը կարող է ուղնության գալ և ուրիշ յեղանակով:

ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ԶՈՒՐՆ ԸՆԿԱԾԻՆ

Ռազմական արշավանքի ժամանակ, պատե-
րագմի ժամանակ, շատ հաճախ և խաղաղ ժա-
մանակ յերբեմն հարկավոր և լինում ուղնել
խեղդովոցին, ջուրն ընկածին:

Պետք է իսկույն և յեթ հանել հազուստը,
մատով լավ մաքրել բերանը, փախումից չպետք



Նկար 10. Ոգնութիւն ջրից հանածին

և վախենալ, տալ նրան աշնայիսի դիրք, ինչպէս
ցույց և աված 10-րդ նկարի մեջ (տես նկար
10) և սեղմել մեջքն ափով, վոր ստամոքսի
և թոքերի մեջ ներս գնացած ջուրը դուրս գա-
րեցանից: Չի կարելի ջուրն ընկածին քարշ տալ

գլուխնիւմար, ինչպէս անում են այդ մի-
ջանի գլուղերում. դրանից ամբողջ արշունը
կլցվի գլուխը, վորը շատ վտանգավոր է. շար-
ժեկ նրան նույնպէս չի կարելի: Ջուրն ընկածի
մարմինը պետք է չփել մահուղի կտորով,
տաքացնել տաք ջրով լիքը շէրով և անհաղաղ
կատարել արհեստական շնչոդութիւն. միե-
նույն ժամանակ պետք է հրավիրել և բժշկին:
Յեղէլ են գեպեր, յերբ ուշքի են բերել մին-
չե անցած աշնայիսիներին, վորոնք մի ժամից
ավելի մնացել են ջրի տակ. ուստի ջուրն ըն-
կածին ոգնութիւն հասնելիս պետք է շատ հա-
մատ լինել և չկորցնել համբերութիւնը: Յեթե
տուժածը սկսի շնչելը, պետք է առանց հակո-
ղութիւն թողնել նրան, պետք է պառկեցնել
տաք անկողնում, գլուխը վեր տալ տաք թեյ
կամ սուրճ և նորից կատարել արհեստական
շնչոդութիւն, յերբ կորցնի նա գիտակցու-
թիւնը:

Այս ձևով են ոգնում և նրանց, վորոնք հողի
տակ են մնացել հանքերում փլատակի դեպքում
կամ պայթիւնից հետո: Հողի տակից դուրս
բերելով մաքուր ող, մաքրել քիթն ու բերանը
մտած հողից և սկսել արհեստական շնչոդու-
թիւն:

ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ԱԾԽԱԾՆԻ ԹԹՎՈՒԿՈՎ ԹՈՒՆԱՎՈՐՎԱԾԻՆ

Ածխածնի թթվուկով կամ, ինչպես ժողովուրդն է ասում, ածուխով թունավորումը կոչվում է չփանց ընկնել. արհեստական շնչողությունը հարկավոր է և այդ տեսակի թունավորվածների համար: Այդ գազն ունի մի հատկություն, վոր ներս շնչելիս միտնում է արյան հետ, ինչպես ոգը, և խանգարում արյանը կատարել իր դերը՝ տալ սնունդ մարմնին: Շփանց ընկնողը սկզբում ունենում է գլխացավ, սրտախառնություն, ապա և ուշադնացություն: Ածխածնի թթվուկը մի գազ է, վորը կիտվում է սենյակի մեջ, յերբ վառարանը շուտ են փակում, յերբ փայտը կամ վառելանյութը լավ չեն վառվել, յերբ ածուխը կիսաալրված է: Այս գազը վոչ հոտ ունի, վոչ գույն. վառարանի մեջ բռնկվող կապույտ կրակն ապացույց է, վոր կա այդ գազը. յերբ մի վորևե չենքում կա չփանց ընկնող, պետք է խեղույն բաց անել բոլոր դռներն ու լուսամուտները և մաքուր ոգ ներս թողնել. չփանց ընկածին դուրս բերել մաքուր ոգ, սառ ջուր լցնել կրճքին և աշխատել, վոր շուտ շնչի:

ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ՈՒՐԻՇ ԳԱԶԵՐՈՎ ԹՈՒՆԱՎՈՐՎԱԾՆԵՐԻՆ

Բացի ածխածնի թթվուկից այդ տեսակի թունավորումներ կարող են առաջ գալ և այն գազերից, վորոնք կիտվում են խոր հանքերում և հորերում. նույնպես կարելի յե թունավորվել և լուսազազով, վորը վառում են մեծ քաղաքներում փողոցների լապտերներում կամ տներում, ուր անց են կացնում այդ գազը գործարանից խողովակներով հողի տակով կամ պատի մեջ:

1915 թվից սկսեցին թունավորել թշնամուս գազերով և պատերազմի ժամանակ. այդ նպատակով կամ բաց են թողնում դազը, վորը ամպի պես տարածվում է թշնամու բանակի վրա, կամ լցնում են նրանով թնթանոթի արկերը և արձակում թշնամու վրա: Վերջին ժամանակները սկսեցին ուսմբերը ևս լցնել գազով. այդ տեսակ ուսմբեր կարելի յե վայր ձգել ողանավից, այնպես վոր այժմ թշնամին ողանավից գազով լի ուսմբեր ձգելով կարող է թունավորել և մի այնպիսի քաղաք, վորը չատ հեռու յե գտնվում ճակատից: Կան գազեր, վորոնք վոչ միայն թունավորում են մարդկանց, յերբ ներս են շնչում ոգի հետ, այլ և

այրում են մաշկը, բշտիկներ առաջացնում նրա վրա:

Պատերազմի գազերի ներգործությունից պաշտպանվելու համար հագնում են գլխի և դեմքի վրա հակագազ դիմակներ: Ներս շնչած ողն այդ դիմակի մեջ անցնում է մի տեսակ նյութով, վորը մաքրում է գազի վնասակար խառնուրդը: Սկզբում, յերբ սովոր չեն, գիշար ե լինում շնչելը. ուստի հարկավոր է աստիճանաբար սովորել դիմակին և հիշել, վոր պատերազմի ժամանակ միայն այս կերպ կարելի յ է իրեն պաշտպանել թշնամու գրգռվ հարձակումից:

Մաշկի պաշտպանության համար գործ են ածում պաշտպանողական հագուստ:

Ռազմական գազից տուժածին ոգնություն ցույց տալու համար նախ և առաջ պետք է դուրս բերել նրան մաքուր ոդ, յեթե դիմակը վողջ է, վոչ մի դեպքում չի կարելի հանել նրան, յեթե հաստատ համոզված չեմ, վոր արդեն հեռացել էք թունավորված տեղից: Յեթե տուժածի դիմակը վնասված է, պետք է անհապաղ փոխարինել նորով: Չպետք է թույլ տալ, վոր թունավորվածը վտտով գնա առա-

ջին որը թունավորվելուց հետո, վորովհետև կան գազեր, վորոնք կարող են մեծ վնաս հասցնել, յերբ ուժ են գործ դնում:

Տուժածին մաքուր ոդ դուրս բերելուց հետո, պետք է հանել հագուստը, վորը նույնպես գազով ծծված է լինում. կան ռազմական գազեր, վորոնք կիտվում են ցածր տեղերում և թփուտներում, ուստի տուժածին չպետք է թողնել այդպիսի տեղում. գազով թունավորվածին ոգնողը պետք է ինքն ել միջոցներ ձեռք առնի իր պաշտպանության համար, նա յել պետք է հակագազ ունենա և պետք է հստի պաշտպանողական հագուստ:

ԻՆՋՊԵՍ ՈԳՆԵԼ ՈՒՏԵԼԻՔԻՑ ՅԵՎ ԽՄԵԼԻՔԻՑ ԹՈՒՆԱՎՈՐՎԱԾՆԵՐԻՆ

Ուտելիքից և խմելիքից թունավորվում են, յերբ ուտում են կամ խմում մի վորեւ թունավոր մթերք: Ոգնելու համար նախ և առաջ պետք է առաջ բերել փսխում. յեթե այդ անեն շատ չուտ, այն ժամանակ թույնն ամբողջովին դուրս կգա ստամոքսից:

Փսխում առաջ բերելու նպատակով կարելի յ է խտուտ տալ սոսորդը (լմպանը) մատով կամ հավի յերկար փետուրով. կարելի յ է մի-

վորեւ անսխորժ բան տալ խմելու, որինակ
3—4 բաժակ գուլ ջուր կամ սապնաջուր:
Փսխման ժամանակ հիվանդի գլուխը պետք է
ծռել դեպի մի կողմ՝ աջնակեա, վոր գլուխը
մարմնի բնից ցածր լինի. դա նրա համար է,
վոր փսխման ժամանակ ստամոքսի պարունա-
կությունը չընկնի շնչափողի մեջ, վորովհե-
տե դրանից մարդ կարող է խեղդամահ լինել:
Փսխումից հետո թունաւորւածին պետք է տալ
աշնակիսի ճարեր, վորոնք վռնչացնում են
թուլնը կամ անվնաս են դարձնում նրան (այդ
տեսակ ճարերը հակաթուլն են կոչւում): Յեթե
մոտիկ տեղում կա դեղատուն, պետք է ասել
ինչով է թունաւորւած և դա բավական է, վոր
դեղատան աշխատակիցը տա խմածի հակա-
թուլնը: Յեթե հնար չկա բժշկին կամ դեղա-
տուն դիմելը, պետք է կատարել հետևյալ խոր-
հուրդները:

Ուշեղ թթւութեամբ թունաւորման դեպքում
(ծծմբաթթւութեամբ, քլորաջրաթթւութեամբ)
կամ կծու ալկալիներով (որինակ. սապոնի սո-
դով), փսխումը վտանգավոր է, վորովհետեւ
ուշ տալուց կարող է պատուել թուլնից վնաս-
ված ստամոքսը: Այդ դեպքում պետք է թու-
նաւորւածին տալ մեծ քանակութեամբ կաթ,

կտավատի սերմի կամ նշապտակի*) խաշուկ.
այդ նյութերը պատում են թուլնը և չեն թող-
նում նրան անցնել ստամոքսի պատերից: Յա-
վերի հանգստացման համար կուլ տալ սառցի
կտորներ. բացի դրանից, ալկալիով թունա-
ւորման դեպքում պետք է տալ խմելու համար
թթու ճար, որինակ՝ լուծած քացախ, իսկ
թթւութեամբ թունաւորման դեպքում պիտք է
տալ կրակաթ:

Մկնդեղով թունաւորման դեպքում պետք
է մինչև բժշկի գալը տալ կաթ ձվի հարած
սպիտակուցի հետ: Չպետք է դադարեցնել
փսխումը:

Փոսֆորով (լուսածնով) թունաւորման
դեպքում կաթ և առհասարակ յուղալի բաներ
չի կարելի տալ. կարելի յէ տալ ամեն կես ժա-
մը մի անգամ մի քանի կաթիլ վոչ մաքուր
րևեկնի խեթ (սկիպիդար):

Չանագան նյութերով թունաւորման դեպ-
քում, յերբ հիվանդը կորցրել է գիտակցու-
թյունը և չի շնչում, պետք է մինչև բժշկի
գալը կատարել արհեստական շնչողություն,
ինչպես այդ վերը նկարագրած է:

*) Կրախմալ:

ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ԹՈՒՆԱՎՈՐ ԿԵՆԴԱՆՈՒՑ ԿԾԱԾԻՆ

Թունավորվել կարելի չե և թունավոր ոձերի և կամ միջատների կծելուց։ Այս դեպքում նախ և առաջ պետք է հող տանել, վոր վերքից թույնը չտարածվի արյան հետ ամբողջ մարմնի մեջ։ Տեղ տեղ ընդունված և ծծել այդ տեսակ վերքերից թույնը, բայց այդ շատ վտանգավոր է, յերբ ծծողի շրթունքների վրա կամ բերանի մեջ կա մի աննշան քերծվածք կամ փչացած ատամ։ Ավելի լավ է կծած տեղին բաժակ ձգել։ Դրա համար պետք է վերցնել մի բաժակ, մեջը ձգել մի փոքր կտոր վառած բամբակ կամ թուղթ, մի ակնթարթում շուռ տալ այդ բաժակը և դնել կծած տեղի վրա այնպես, վոր բաժակի յեզրերը լավ կպչեն մաշկին։ Մաշկը ձգվում է բաժակի ներսը և վերքից մի փոքր արյուն է գալիս։ Դրանից հետո վերքը պետք է այրել տաքացրած քրոցով կամ բարակ մեխով։ Յեթե ձեռքի կամ վուռքի վրա չե կծածը, կարելի չե կծած տեղից վերև կապել, վոր թույնը չտարածվի մարմնի մեջ, կապելուց հետո բաժակ դցել կծած տեղին, այրել այդ տեղը և հետո բաց անել կապը։

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՏԵՂԱՓՈԽԵԼ ՎԻՐԱ- ՎՈՐԻՆ ՅԵՎ ՇԻՎԱՆԴՆԵՐԻՆ

Ամեն մարդ պետք է իմանա վոչ թե միայն ինչպես հասցնել առաջին ոգնությունը, այլ և պետք է իմանա ինչպես տեղափոխել վիրավորին կամ հիվանդին բժշկի կամ բուժակի մոտ։ Դա առավել ևս պետք է գալիս պատերազմի ժամանակ, մարտի ժամանակ, յերբ մարտիկները ցրված են դաշտում մի քանի անձով, թագ են կացած մացառուտների մեջ, խորթ ու բորթ տեղերում, յերբ թշնամու կրակը թույլ չի տալիս մոտեցնել բժշկական կայանը։ Շատ վիրավորներ իրենք ի վիճակի չեն հեռանալ թշնամու կրակի բռնած տեղից և հասնել բժշկական կայանին։ Նրանց պարտավորեն ոգնել սանիտար-բեռնակիրները։ յերբ վիրավորները շատ են, հրամանատարը կարող է հրամայել յերաժիշտներին և սոսկ զինվորներին տեղափոխել վիրավորներին։

Զորամասերում վիրավորներին տեղափոխելու համար կան պատգարակներ. մի մարդ կարող է դնել վիրավորին պատգարակի վրա. ոգնողը մի ձեռքով քրկում է վիրավորին թիակներից ստորև, իսկ մյուսով ազդրի տակից


(տես նկար 11): Ավելի լավ է, յերբ վիրավորին յերկուսով են տեղափոխում. յերկուսն ել կանգնում են վիրավորի մի կողմից (տես նկար 12) և յերկուսով միասին բարձրացնում են վիրավորին: Ծանր վիրավորին տեղափոխելիս լավ է, յերբ յերրորդ փոխադրողը դնում է վիրավորի յերկրորդ կողմից և բռնում վիրավորված մասը:



Նկար 11. Ինչպես գրկել վիրավորին

Շատ հաճախ պատգարակ չի լինում. այն ժամանակ վիրավորին կարելի չէ փոխադրել սանդուխքի վրա, դռան փեղկի վրա, փռելով տակին գրատ(չինել) կամ հարդ. կարելի չէ յեր-


կար ձողին կամ սայլի առեղին կապել վրանից վերցրած քաթանի կտորը, մեջը դնել վիրավորին և տեղափոխել նրան յերկուսով: Թեթև վիրավորին կարելի չէ շալակել կամ նստեցնել ձեռքերի վրա, միայն ոգնողները պետք է այնպես բռնեն ձեռքերը, փոր վիրավորի համար հարմար լինի նստելը (տես նկար 13):



Նկար 12. Ինչպես տեղափոխել յերկուսով

Կարմիր բանակում վիրավորներին տեղափոխելու համար կան զսպանակ ունեցող սանիտարական յերկականի սայլակներ: Յեթե վիրավորներին տեղափոխում են տնտեսական սայլակներով կամ գյուղական սայլերով, այն ժամանակ պետք է վերցնել մեծ քանակու-

Թյամբ հարդ կամ խոտ: Վերավորներին տեղափոխելիս պետք է գնալ հանդարտ, ընտրել հարթ ճանապարհ, առանց խորթ ու բորթի, խույս տալ ճամբի քարերից, վոր վերավորի համար հանգիստ լինի:




Նկար 13. Ձեռնարձուկ վերավորին տեղափոխելու համար

Այնտեղ, վորտեղ չի կարելի տեղափոխել վերավորին սալով, պետք է փոխադրել այնպես, ինչպես դա ցույց է տված 14-րդ նկարի վրա. պատգարակն ամրացնում են յերկու յերկար ձողի վրա և կապում ձիերի թամբին: (Նկար 14):

Վերավորներին տեղափոխելու համար կան սանիտարական ավտոմոբիլներ և գնացքներ,

իսկ կան պետուլթյուններ, վորոնք ունեն և սանիտարական ոգանավեր:



Նկար 14. Բեռնած պատգարակ

ՎԱՐՄԻՐ ԽԱՁԻ ՆՇԱՆԻ ՄԱՍԻՆ

Բոլոր պետուլթյունները համաձայնությամբ են կայացրել, վոր պատերազմին վերավորներն ու հիվանդները նույնպես և նրանք, վորոնք ոգնուլթյուն են ցույց տալիս (բժիշկները, բուժակները, սանիտարները) չեն համարվում կռվին մասնակցողներ, նրանց վրա կրակել չի կարելի և բռնուլթյուն դործ դնել նրանց վրա նույնպես չի կարելի: Վորպեսզի հեշտ լինի ջոկել այն անձանց, վորոնք ոգնուլթյուն են ցույց տալիս վերավորներին և հիվանդներին, պայմանավորվել են, վոր այդ անձինք պատերազմի ժամանակ պետք է ունենան ձախ թևի վրա, արմուկից վերև սպիտակ կապ վրան կարմիր խաչ: Բոլոր սանիտարական սալակների, ավտոմոբիլների, գնացքների

վրա պետք է նկարած լինի սպիտակ շրջան,
մեջը կարմիր խաչ: Այն շենքերի վրա (հիվանդ-
դանոցների և զորական լազարետների վրա),
վորտեղ ողնություն են ցույց տալիս հիվանդ-
ներին և վիրավորներին, պետական պրոչակի
հետ միասին պետք է լինի և սպիտակ դրոշակ,
վրան կարմիր խաչ: Խորհրդային Սոցիալիս-
տական Հանրապետութունների Միությունը
նույնպես համաձայնվել է ցուցադրել այդ նը-
շանը և Ռազմա-Հեղափոխական Խորհրդի հրա-
մանով 1925 թ. № 798 կարգադրված է գոր-
ծածել այդ նշանը պատերազմի ժամանակ մի-
այն այն դեպքերում, յեթե դա չի ոգնի թշնա-
մուն պարզելու կարմիր բանակի մասերի գըս-
նվելու տեղը: Իսկ միջազգային պայմանը հա-
տարարված է նույն թվի № 959 հրամանով:

Ընկե՛ր կարմիր բանակային,

Դու կարդացիր այս գրքույկը և իմացար
այն գլխավոր կանոնները, ինչպես ցույց տալ
առաջին ողնությունն այն դեպքում, յերբ մի
պատահար լինի քեզ հետ կամ քո ընկերոջ հետ,
պատերազմի գալտում, կռվի միջոցին, խաղաղ
ժամանակ, զորահանդիսի միջոցին, դյուղում,
վորտեղից դու յեկել ես կարմիր բանակ և ուր
վնասու յես իսկական ծառայությունդ վեր-
ջացնելուց հետո: Իհարկե, կարգալիս՝ բոլորն,
ինչ գրված է, իսկույն հասկացար. դա ցավ չե-
ամեն ինչ իսկույն չի հաջողվում, մի անգամ
եւ կարդա գրքույկը: Հարցեր առաջարկիր քո
զորամասի բժշկին կամ բուժակին, ինչը չես
հասկացել: Ուրիշ գրքեր եւ կարդա, ինչպես է
չինած մարդու մարմինը, ինչից են առաջ դա-
լիս հիվանդությունները, ինչպես պաշտպան-
վել նրանցից և ինչպես պաշտպանել իր առող-
ջությունը: Ի հարկե, գրքերից դու բոլորը չես
սովորի, ինչ սովորել եւ բժիշկը յերկար ժա-
մանակ, բայց դու կհասկանաս, վոր չի կարե-
լի վստահել առողջությունը գանազան պառավ
կանանց կամ հեքիմներին, դու գրանից հե-

տո չես հաժարա հրաչքներին, այլ հհաժարաա
դիտությանը, վորը միայն կարող է դալ ող-
նության մարդուն նրա ծանր ժամանակին:

Վորպեսզի իմանալ՝ ցույց տալ առաջին
ողնությունը հիվանդին կամ վիրավորին, պետք
է շատ բան գիտենալ և շնորհիք ունենալ. աշ-
խատիր այդ բոլորը ստանալ, բանի կարմիր
Բանակումն էս, վոր պատրաստ լինես պատե-
րագմի ժամին և վոր տանես այդ գիտությունը
գյուղ և գործարան, ուր դու վերադառնալու
յես ծառայությունդ հետ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0279538

3941

674